



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

33
7-86

№ 11

Գրադարան «Յանձնական»

№ 11

ԺԱՆ ԺՈՐԵՍ

ԲՈՒՐՃՈՒՄԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ
ԻՆ ՎԱՐԱՅ ՔՐՈՒՐԵ

Ճ Ա Ռ

Արտասահմուած Ֆրանսիական պարլամենտում 1906 թ. յունիսի 12—14-ին

Գրանցուելուից թարգ. Ս. Շի.

Դ Պայմ.

1-ին հազար

1906
թիվ 1, ից

338
d-86

(25 APR 2013)

06 FEB 2007

№ 11

Գրադարան «Յառաջ»-ի

07 FEB 2010

300
1274-Ձ0

ԺԱՆ ԺՈՐԵՍ

ԲՈՒՀԾՈՒԿԱՆ ԱՌՓԱՎԱՆԻԹԻՒՆ
ԵՎ ԱՌԱՋԱՑ ԳՐԱԴԱՐԱՆ

1003
11724



Արտասահմանական գրանսիլիան պարլամենտում 1906 թ. յունիսի 12—14-ին

Գրանսիլիայից թարգ. Ա. Շի.

1906
ԹԻՖԼԻՍ

Պարոններ!

Բաւական չէ կրկնել «սօցիալական յառաջադիմութիւն», «սօցիալական ըեփօրմներ» բառերը, որոնք այժմ թնդում են բոլոր ճառերի մէջ, երևան են գալիս բոլոր յօդուածներում և բոլոր ծրագիրներում։ Պէտք է խմանալ՝ թէ ինչ որոշ, յայտնի մտքով ենք մենք գործածում այդ բառերը։ Պէտք է, որ նրանք չը լինեն որպէս զանդի այն հնչիւնները, որոնց լաելիս իւրաքանչիւրը կարծում է՝ թէ լսում է այն երգը, որ արդէն իր մտքումն է։ Անհրաժեշտ է պարոններ, որ մեր մէջ տեղի ունենայ մի որոշ պարզ բացատրութիւն։

Երբ բանւորները կազմակերպւում, խմբւում են այս տեսակ մեծ շարժման համար¹⁾, երբ նրանք հարիւր հազարներով, չնայած սինդիկատների տարրերութեան, ձևակերպում են միևնույն էական պահանջը՝ բանւորական օրւայ օրինական սահմանափակումը, թէև այդ պահանջի առարկան իսկապէս պրօֆեսիօնալական է, — գործադուլը իր հսկայական չափերով անցնում է պրօֆեսիօնիալ սահմանները. նա դառնում է հասարակական մի ցոյց, հասարակական պահանջ, հասարակական հատուցումն։ Դա պրօլետարիատն է, որպէս դասակարգ, պրօլետարիատը,

1) Պաղէ-Կալէում վերջիրս տեղի ունեցած հսկայական գործադուլի վրա է ակնարկում ժօրէս։ Ծ. Թ.

որպէս մի միութիւն, որ երես է գարձնում մի ըէժիմից, ուր նա ստիպուած է թողնել իր աշխատանքի արդիւնքի մի մեծ մասը, ուր նա այդ աշխատանքի նոյն իսկ ընթացքի մէջ անգամ չունի ոչ մի մաս: Այդպիսով այդ շարժումը, թէկ կօրպօրատիվ, թէկ պրօֆեսիօնալ, նոյն իսկ իր ընդարձակութեամբ դնում է երկրի, պարլամենտի և կառավարութեան առջև սօցիալական խնդրի ամբողջ մեծութիւնը:

Այդ բանւորները՝ այդպէս խմբուած, որպէս բանւոր գասակարգ, հարցնում են պարլամենտից, կառավարութիւնից. ի՞նչ պէտք է անէք մեզ համար, սօցիալական խնդրի մրափսի լուծումն էք առաջարկում դուք մեզ: Եւ որովհետև նրանց գործողութիւնն իսկ, նրանց պահանջը, — թէկ նրանք ուղղակի չեն դիմում հասարակական իշխանութիւններին, — դնում է սօցիալական ամբողջ խնդիրը և հարկադրում է կառավարութեան մի լուծում տալ, այդ պահանջները ձանձրացուցիչ են կառավարութիւնների համար. սրանք չունին ոչ մի լուծում:

Ա՛հ, ես հասկանում եմ ներքին գործոց պարոն մինխատրի¹⁾ շուարումը, բարկութիւնը: Նա մինչև այժմ բոլոր հաստատութիւնների, հիմնարկութիւնների նկատմամբ գործադրել է բացասական քննադատութիւն, առանց յանգելու մի նոր հասարակութեան, մի նոր սիստեմի: Եւ երբ մարդիկ, որ ըմբռնել են նըրա սուր քննադատութեան դասերի մի մասը, ըսկանում են շարժւել, սկսում են առաջ գնալ, երբ նրանք իրենց մասսայական գործողութեամբ ազդարարում են,

¹⁾ Ժորժ Կլեմանսո՛ սօցիալիստարմատականների յայտնի պարագլուխը:

որ սոսկ կրիտիկայի ժամը անցել է, որ անհրաժեշտ է իրապէս վերջ գնել, կերպարանափոխել հասարակական անարդար և ճնշող կարգը, այն ժամանակ երեկուայ կրիտիկոոր՝ կանգնած լինելով ապագայի նկատմամբ ունեցած իր մտքերի ոչնչութեան առջև, անհրաժեշտաբար վատ է տրամադրւած... (Բուռն ծափահարութիւններ ծայրայեղ ձախակողմեան նստարանների վրա):

Զգուշացէք! ներկայ հասարակութիւնը, որ դուք զիտէք քննադատել, բայց որը դուք չգիտէք փոխարենել... (Զանազան շարժումներ)

Պարլամենտի կենդրոնի պատգամատրներից մէկը. — Դուք նոյնպէս չգիտէք:

Ժօրէս. — Միթէ կարծում էք, որ ես այս ամբիոնն եմ քարձացել, որպէսզի խոյս տամ որ և է խնդրից: Միթէ կարծում էք, թէ ես չեմ ըմբռնում այն հարցը, որ ձեր մտքի մէջ է: Ես նրան կը պատասխանեմ. ես ձեզ ընդհանուր գծերով կասեմ, միայն ճշտիւ, որքան կարող եմ, թէ ի՞նչ մեթոդով, ի՞նչ տիպի, ի՞նչ ձեկի ենք մենք կամենում փոխել հասարակական կարգը:

Սակայն այդ հարցը քննութեան ենթարկուելուց յետոյ ես իրաւունք կունենամ դիմել ձեզ և բարեկամաբար իմ կողմից ձեզ մի քանի հարցեր տալ:

Բայց ենց այժմեանից ես ձեզ ասում եմ. «Զգուշացէք. ներկայ հասարակութիւնը, ի՞նչ էլ ասեն, չէ հանգչում լայն, հաստատ հիմքերի վրա»:

Հիւսիչն Դիօր. — Իսկ ձե՞րը:

Ժօրէս. — Մեզ շատ անգամ են ասել, թէ արդիւնաբերութեան միջոցների, կապիտալիստական սեպհականութիւնից հասարակական սեպհականութեան անցնելու վերաբերմամբ մեր ունեցած գաղափարները ցնորական

Են և հանդիպում են անյաղթելի գիմազրութեան, որովհետև սեպհականութիւնը արդէն տարածւել և ներս է մտել ազգի բոլոր խաւերի մէջ:

Է՞ն պարոններ, ես չեմ ժխտում, որ, այսպէս ասած, հարստութեան տեսակետից ֆրանսիական ազգաբնակութեան միջին խաւերում որոշ չափով կապիտալների կուտակում կայ: Հարկաւոր կըլինի իրապէս ձեռնամուխ լինել հասարակական տրանսֆորմացիայի: Աչքի առաջ ունենալով մասնաւոր շահերը, պէտք է սրանց առաջարկել որոշ համապատասխան հատուցում: (Զանազան շարժումներ):

Բայց գիտէք, ինչ են ցոյց տալիս ֆինանսական մինիստրութեան հրատարակած ստատիստիկական տեղեկութիւնները մեր երկրի հարստութեան և սեպհականութեան այժմեան խևկական բախշման նկատմամբ: Այդտեղ է միայն պարզում բոլորի ժառանդած ստացուածքի ճշմարտութիւնը: Արդ, 1—10,000 ֆրանկ ունեցողների գումարած ընդհանուր կապիտալը հասնում է 23 միլիարդի: Միջին բուրժուազիայի միջին խաւերի 10,000—100,000 ֆրանկ ժառանգութիւն ունեցողների (1,800,000 հոգի) ընդհանուր կապիտալը ներկայացնում է 50 միլիարդ:

Ի նկատի ունենալով հասարակական ստացուածքների միջին աստիճանների վերաբերող թւերը, նայեցէք այժմ այն, որ սանդուխը ներքեւում է, նայեցէք և այն, որ վերեւում է:

Ներքեւում դուք նկատում էք այս: Մինչդեռ ֆրանսիայում իւրաքանչիւր տարի մեռնում են 800,000—900,000 անձինք, յայտարարուած ժառանգութիւնների թիւը չէ հասնում 400,000-ի: Ես շատ լաւ գիտեմ, որ

միւս 400,000 հոգի մեռնողների թւի մէջ, որոնք ոչ մի ժառանգութիւն չեն թողնում, մի մասը, միայն մի ամենափոքր մասը, անչափահասները են: Մնացածները այն ահազին պրօլետարիատն է, մանաւանդ գործարանական պրօլետարիատը, որ ստեղծում է ամեն ինչ, որ արդիւնաբերում է ամեն ինչ: Նրա համար, երբ գալիս է անհատների սօցիալական հաշուեկցուի գերագոյն կարգադրութիւնը, որ տեղի ունի մահուան ժամին, երբ գալիս է վճռական հաշուի այդ կարգաւորումը, պրօլետարիատի սեպհականութեան հաշուեկցիուր արձանագրում է գերօնվ:

Եւ այդպէս, մինչդեռ տարեկան 300 հազար անձինք, որ ներկայացնում են երկրի ազգաբնակութեան 15 միլիոն հոգի, ծանր, անընդհատ աշխատանքի կեանքից յետոյ մեռնում, չքանում են առանց մի սանտիմ անգամ թողնելու: Միւս կողմից ես նկատում եմ 176 միլիարդ կապիտալի ժառանգութիւն մնացող ստացւածքից, որ կազմում է 36 միլիոն ֆրանսիացիների ողջ հարստութիւնը, այդ 176 միլիարդից 221,000 անհատ, տիրում են 105 միլիարդի (Ծափահարութիւններ ծայրայեղ ձախակողմում... ընդհատումներ կենարոնում):

Ա՛ն, գուք կարող էք փոփոխել, շտկել թւերը: Ես հաւատացած եմ, որ ստուգելուց յետոյ, ֆինանսների պարոն մինիստր, գուք ստիպւած կլինէք այս ամբիօնից նրանց հաստատել:

Այդպէս, 105 միլիարդ վայելում են 221,000 անձինք: Եւ սանդուխը միւս ծայրին, անդունդի միւս եղբլին 15 միլիոն անհատներ, որ ոչինչ չունեն:

Պ. Էյնար.—Պարոն Փօրէս, մեր գրողներից էք դուք այդ թւերը վերցրել: Մենք այնքան քիչ ենք խոյս տալիս վիճաբանութիւնից, որ ոչ թէ սօցիալիստ գրող-

ներն են այդ թուերը յառաջ բերել, այլ մեր գրողները:
Միայն գուշ այդ թւերին այնպիսի նշանակութիւն էք
տալիս, որ նրանք չունեն: Խօսեցէք մեզ հետ ձեր նոր
հասարակութեան մասին:

Ժօրէս.—Ես շնորհակալ եմ պարոն Էյնարից, որ
հաստատեց իմ խօսքերը...

Պարոններ, ես ինքս անձամբ նեղութիւն եմ յանձն
առել, իմ անփորձութեամբս հանդերձ, ուղղակի անել
հաշիւնները: Շատ հասարակ են նրանք: Նրանց տարեր-
քը մեր տրամադրութեան տակ են դրուած ֆինանսնե-
րի պ. մինիստրի կողմից:

Որպէս զի մեր վիճաբանութիւնները աւելի կատա-
րեալ լինեն, ես կաւելացնեմ Պարիզին վերաբերեալ թւե-
րը, որ շատ նշանաւոր են:

Պարիզում կուտակւած և կենտրոնացած է ֆրան-
սիական հարստութեան մի մեծ մասը: Մինչդեռ բնակիչ-
ների թիւը կազմում է ֆրանսիայի ամբողջ ազգաբնա-
կութեան մի տասներկու երորդը, Պարիզի ժառանգու-
թիւնների տարեվճարը ներկայացնում է ամբողջ ֆրան-
սիայի ժառանգութիւնների տարեվճարի գրեթէ մի քա-
ռորդը: Եւ մինչդեռ՝ ի նկատի ունենալով ազգաբնակու-
թեան թիւը, Պարիզում բացուած ժառանգութիւնների
թիւը պիտի լինէր մի տասներկու-երրորդական, այնինչ
այդ թիւը ֆրանսիայում թողած ժառանգութիւնների
ընդհանուր քանակութեան մի քսան և հինգերորդականն
է միայն կազմում:

Այդպէս, պարոններ, այս բացառիկ կերպով ուժեղ
իւլիւստրացիայով այնտեղ, ուր հարստութեան և կապի-
տալի ամենամեծ կուտակում կայ, այնտեղ խնայողու-
թիւն, թէկուզ ամենաշնչին խնայողութիւն անող քաղա-

քացիների թիւը իջնում է կէսից շատ ցած՝ ընդհանուր
միջին թւից էլ ցած:

Եհ ուրեմն, գուշ, որ անդադար մեղ հարցնում էք՝
ինչ ենք մենք կամենում անել, ինչ ենք մենք կամենում
դնել այսօրւայ հասարակութեան տեղը, — ես ձեզ հարց-
նում եմ լոկ միայն այս: Ինչպէս էք բացատրում գուշ
այս զարմանալի տարբերութիւնը, որ գոյութիւն ունի
ումանց ահագին, անչափ ստացուածքների և միւսների
ստացուածքների բացակայութեան, սօցիալական ոչնչու-
թեան մէջ: Միթէ գուշ այդ բացատրում էք դիպուածով՝
աշխատելու կարողութեան տարբերութեամբ և ծանր
աշխատանքին ընտելացած լինելով: Կամ գուցէ գուշ
կամէք, որ այս միլիարդների սանդուղքի վերևում կան
միայն աշխատանք և նեղութիւն, իսկ արդիւնաբերող
մեծ գասակարգի մէջ՝ միայն պարապութիւն, ծուլութիւն
և անընդունակութիւն: (Ծափահարութիւններ ծայրայեղ
ձախակողմում):

Ո՞րտեղից է, ուրեմն, առաջ գալիս այս տարբերու-
թիւնը: Լոկ նրանից, որ ոմանք շնորհիւ սեպհականու-
թեան ներկայ կազմակերպութեան, շնորհիւ նրան, որ
գուշ անուանում էք անհատական սեպհականութիւն,
ոմանք տէր են կապիտալի, առանց որի միւսները չեն
կարողանում ոչ աշխատել, ոչ ապրել: Տիրելով
ընդարձակ կալուածքների, գործարանների, հանգերի,
վարձով տալու տների, այդպիսով նրանք վերցնում են
մի անընդհատ հարկ, անընդհատ տասանորդ բազմա-
միլիօն քաղաքացիների աշխատանքից:

Եւ մենք ձեզ ասում ենք: Միթէ գուշ նրանց, որ
արդիւնաբերում են, յաւիտեան պիտի գատապարտէք
կրելու սեպհականութեան այդ ձեզ: Եւ մի հասարակու-

թիւն, ուր աշխատանքի բոլոր միջոցներին՝ հողին, գործարաններին, հանքերին, մթերանոցներին տիրէլ ոչ թէ իշխող կապիտալիստների մի փոքրամասնութիւն, այլ նոյն արդիւնաբերողների ամբողջութիւնը՝ խմբւած, դաշնակցութիւն կազմած, միթէ այդ հասարակութիւնը չէր լինի ամենալաւագոյնը, ամենաարգարը, աւելի մարդկայինը: Պատասխանեցէք, նախ քան մեղ կը նզովէք: (Բուռն ծափահարութիւններ ծայրայեղ ձախակողմում):

Արդ, այդ տրանսֆորմացիան, այդ փոփոխումն է...

Պ. Ո՛Ռ Դիօն, — Ո՛Հ. այդ էքսպրոպրիացիան... (գրաւումն)

Ժօրէս. — Այս, պարոն Դիօն, ահա այդ էքսպրոպրիացիան է, որ պահանջում են սօցիալիստները: (Բուռն ծափահարութիւններ ծայրայեղ ձախակողմում):

Եւ եթէ դուք, ինչ որ էլ լինի, հակառակ ձեր նախապահարմունքների, հակառակ այն դիւրին հեգնութեան, որ հասարակական նոր ձևերի նկատմամբ միշտ իրանց տրամադրութեան տակ են ունեցել մարդիկ.... Եթէ հակառակ այս ամենի դուք սախպուած էք խոստովանել, որ այդ հասարակութիւնը աւելի արդար է, — զգուշացէք: Եթէ անմիջապէս աւելացնէք, որ այդ հասարակութիւնը անկարելի է, դուք իսկապէս մարդկային մտքի սնանկութիւնը կը հրատարակէք: Դա ոչ թէ աջակողմեան ձեր թշնամիներն են, ոչ թէօկրատիայի մարդիկն են, որ յայտարարում են զիտութեան և մարդկային մաքի սնանկութիւնը, — այլ դուք ինքներդ: Եթէ խոստովանելուց յետոյ՝ թէ մի հասարակութիւն, որը տալիս է մի յաճախ պարապ փոքրամասնութեան զրեթէ ամեն ինչ և որը մերժում է զրեթէ ամեն ինչ մի շարունակ աշխատող, շարունակ տքնող մեծամասնութեան (Շատ լաւ, շատ լաւ, ծայրայեղ ձախակողսեան զանա-

զան նստարանների վրայ) ... եթէ խոստովանելուց յետոյ, որ այդ հասարակութիւնը անարդար է, և, ձեր ձեռքին ունենալով ժողովրդական գերիշխանութիւնը՝ նրան փոխակերպելու, տրանսֆորմացիայի ենթարկելու, — դուք յայտարարում էք վերջնիս անկարելիութիւնը՝ թէ նա կը յանգի միայն քաօսի, անկարգութեան և աւերման, — այդ ոչ թէ եկեղեցին է, այլ դուք ինքներդ էք, որ մարդկային մտքի սնանկութիւնն էք յայտարարում: (Ծափահարութիւններ ծայրայեղ ձախակողմում):

Այդ տրանսֆորմացիան հնարաւոր է նոյն իսկ ձեր սեպհական օրէնքներով, և նա կարող է գործել մարդկային բնութեան յատուկ յայտնի և ստուգւած օրէնքներով:

Պարոններ, անկարելի է, մարդ անկարող է ասել իրապէս, ինչ որոշ, ճիշտ տեղի կունենայ այդ մեծ տրանսֆորմացիան:

Պ. Դիխոսուս. — Ինչո՞ւ:

Ժօրէս... Այդ անկարելի է. ես ձեզ մի օրինակ տամ: Մի մեծ հարց է, մի հարց, որ յաճախ ծեծւել է սօցիալիստների մէջ՝ թէ արդեօք մասնաւոր կապիտալի ընդհանուր էքսպրոպրիացիան՝ կապիտալ, որ պիտի հիմնէ հասարակական սեպհականութիւնը և այս հաստրակական սեպհականութեան հիմքի վրայ՝ մարդկանց կօսպերատիվ (գործակցական) աշխատանքը, — դա դեռ մի մեծ հարց է՝ թէ այդ էքսպրոպրիացիան արդեօք հատուցմամբ տեղի կունենայ...

Աջակողմում (հեղնաբար). — Ո՛Հ, ո՛չ. հատուցման կարիք չկայ:

Պ. Հտուրը յօն. — Զարժէ նեղութիւն կրել: Դա կը լինէր սկիզբն սնանկութեան (Աղմուկ):

Ժօրէս.—Դուք, պարոններ, ինձ չէք դարմացնում։ Թոյլ առուէք ինձ ասել, որ ես այնքան ընտելացած եմ ժողովների և կուսակցութիւնների, որ զիտեմ, երբ մէկը փորձում է սեպհականութեան մի որոշ ձևին յարած, կպած մարդկանց առջև նախագծել մի նոր հասարակութեան ձեւ, նա անխուսափելիորէն արժանանում է ծաղրի և հեգնութեան։ Ես այդ զիտեմ, ես այդ զիտեմ մեր երէցների փորձերից։ Բայց ես զիտեմ նոյնպէս, որ ծաղրի-ծանակի մէջ է, երբ մարդ քաջութիւն և ազնւութիւն ունենայ՝ նրանց դէմ առ դէմ գալու, որ գաղափարները զարգանում, յառաջադիմում են։ (Բուռն ծափանարութիւններ ծայրայեղ ձախակողմում):

Բայց քանի որ դուք մեզ շատապեցնում էք, որ մենք բացատրենք, որոշենք, առաջուանից նախագծենք մի կերպով նոր հասարակութեան մակարդակը, որ պիտի կառուցանէ իր գերիշխանութեան ժամանակ պրօլետարիատը, երբ սա կը նուաճէ իշխանութիւնը, — ես իրաւունք ունեմ ձեզ ասել՝ ի՞նչ պայմաններում միայն հարաւոր է այդ որոշումը։

Այն, ի՞նչ որ դուք կարող էք, այն, ի՞նչ որ դուք պարտաւոր էք գիտնականորէն հարցնելու ոչ թէ մի մարդուց, այլ մի կուսակցութիւնից, — նա չպտի ձեզ ասէ՝ թէ պատմական ի՞նչ մանրամասնութիւններով տեղի կունենայ անցքերի ապագայ բարդութեան ժամանակ հասարակական մեծ տրանսֆորմացիան։ Ես ձեզ մի օրինակ բերի. ես ձեզ ասում էի՞ մի հարց կայ, որ վիճուել, ծեծուել է՝ թէ կապիտալիստական բուրժուազական սեպհականութեան ընդհանուր գրաւումը արդեօք հատուցմամբ կըլինի։

Պ. Էրնեստ Փլանդէն. — Դուք կարող էք առանց հատուցման սկսել։

Ժօրէս.—Եհ, պարոններ, որքան էլ մեծ լինի ձեր անհամբերութիւնը այդ իմանալու, կամ ձեր հեգնութիւնը իմ ասածների նկատմամբ, սօցիալիստներին անհնարին ձշտութեամբ ասել՝ թէ էքսպրոպրիացիան տեղի կունենայ հատուցմամբ, թէ առանց հատուցման։ (Ծափահարութիւններ և ծիծաղ ծայրայեղ ձախակողմում):

Մարկիզ դր Դէօն. — Յամենայն դէպու հատուցումը թղթադրամներով կըլինի։

Պ. Մօժան. — Դուք նրանց յոյս էք տալիս։ (Ծիծաղ ձախակողմում):

Ժօրէս.—Ես ասում եմ, որ ինձ համար այդ անհնարին ձեզ ասել։

Եթէ, պարոններ, այդ կախուած լինէր միայն մեզ զանից, ես հաւատարիմ կմնամ սօցիալիստների մեծամասնութեան գաղափարին և իդերին։

Սօցիալիստ Մեսլիէ. — Բոլոր սօցիալիստների (գանազան շարժումներ)։

Ժօրէս.—Զգուշացէք։ Պարոններ, այս միաբանութիւնը նոյն իսկ սօցիալիստական միաբանութիւն, դա մի հրաշք է, որ ես չեմ սպասում։

Ես ասում եմ, եթէ մեզանից կախուած լինէր, դա կըլինի համաձայն սօցիալիստների մեծամասնութեան, մեր կուսակցութեան մեծ թէօրէափիկների մեծամասնութեան իդերին, ձեակերպած գաղափարին, այն է՝ որ այդ էքսպրոպրիացիան տեղի ունենայ հատուցման ձանապահով։ (Զանազան շարժումներ)։

Պարոններ !

Պ. Բանկ այսօր առաւօտ յիշեցնում է Բլանկի 1869 թվին ասած յայտնի խօսքը «Սօցիալիստական գաղափարը գտնուում է գեռ քննադատական շրջանում»։ Այս նա չի կարող թողնել բննադատի դերը սօցիալական անարդարութիւնների նկատմամբ։ Սակայն ես կարծում եմ, որ սօցիալիստական կուսակցութեան տեսական հետազօտութիւնների ջանքերը շարունակւելու հետ միասին, բանւոր դասակարգի քաղաքական ներկայացուցիչների թիւը պարլամենտում և պարլամենտից դուրս նրա տնտեսական կազմակերպութեան աճման հետ միասին՝ սօցիալիզմը միենոյն ժամանակ պարտաւոր է երեան գալ՝ որպէս մի օրգանական ոյժ։

Եւ ահա թէ ինչու համար ես փորձեցի, ես փորձում եմ մի քանի բառով հենց այժմեանից այստեղ ուրուագծել ամբողջութեան լուծումը։ Որպէս զի ես այդ անեմ մի որոշ օգտաւէտութեամբ, մի որոշ արժանապատութեամբ, ինձ անհրաժեշտ է պատգամաւորական ժողովի ուշադրութիւնը և ես ինդրում եմ չընդհատել մի բացարութիւն, մի մեկնութիւն (exposé), որ կարելի է անել միայն մի որոշ հետեւղականութեամբ և մի որոշ ազատութեամբ (Շատ լաւ, շատ լաւ։ — Խօսեցէք խօսեցէք)։

Եթէ ես, պարոններ, յայտարարեցի, որ անկարելի է ստոյգ, հաստատ ասել՝ թէ սօցիալական տրանսֆօր-

մացիայի, սօցիալական յեղափոխութեան ժամանակ, իրականապէս, ինչ կերպ, ինչ ձեռվ տեղի կունենայ կապիտալիստական սեպհականութեան ընդհանուր էքսպրոպրիացիան, թէ նա կըլինի հատուցմամբ, թէ առանց հատուցման, — այդ ես ասացի ոչ թէ նրա համար, որ այդ մասին իմ կարծիքը անկարող է, իմ յառաջազրութիւնը՝ տատանւող։ Ոչ. այլ որովհետեւ այդ նիւթերի վերաբերմամբ ամենապարզ ծրագիրներն անգամ, ազատ-համարձակ ցանկութիւններն անգամ կախում ունեն գէպքերի, անցքերի ոյժից։

Դրա ապացոյք դուք տեսաք Թրանսիական Մեծ Յեղափոխութեան ժամանակ, որը սկզբում որոշեց էքսպրոպրիացիան կատարել հատուցման ճանապարհով, — ֆէօդալական իրաւունքների մեծ մասի վերագնումը, — իսկ յետոյ կուով յափշտակւած, զրգուած՝ նա ձեռնամուխ եղաւ այդ էքսպրոպրիացիային առանց հատուցման։

Եւ դուք, պարոններ, տեսնում էք այս ժամին, երբ ես խօսում եմ, համանաման մի կրիզիս եւրոպայի միւս ծայրին։ Այստեղ ժողովւած է մի համագումար՝ ուսւժողութիւնին առաջին համաժողովը, որը միջոցներ է ուսումնասիրում՝ ընդարձակ էքսպրոպրիացիայի ճանապարհով հողը տալ զիւղացիներին։ Այդ համաժողովը վարող կուսակցութիւնները հողը զիւղացիներին տալու համար առաջարկում են մասնաւոր խոշոր կալուածների էքսպրոպրիացիայ՝ հատուցման միջոցով։ Պարոններ, նըրանցից չէ կախուած ապագան կապել այդ բանաձեկի հետ։ Սա կիրագործւի, եթէ ազատութիւնը այնտեղ կըհաստատուի օրինական էկոլիցիայով։ Իսկ եթէ իշխանութիւն կոյը զիւղացիական ապստամբութիւններ, այն

Ժամանակ էքսպրոպրիացիան կը կատարուի երկի այլ ձևերով:

Ահա այն վերապահումը, որ ես անում եմ: Ես ոչ
յաւակինութիւն ունեմ, ոչ անիրաւութիւն պահանջելու
առաջուանից պայմաններ դնել բանւոր գասակարգին,
աշխատանքի աշխարհին: Ես զիտեմ և ես յայտարարում
եմ, որ աշխատանքի իրաւունքը տէր է, իշխող է: Եւ
ես կըմիանամ, ինչ ժամ՝ էլ որ աշխատանքի աշխարհը
կամենայ տալ նոր հասարակութեանը,—ես ամբողջ
սրտով, ամբողջ մտքով կըմիանամ տրանսֆօրմացեայի
համար անհրաժեշտ ջանքերին: (Ծափահարութիւններ
ծայրայեղ ձախակողմում): Բայց ես իրաւունք ունեմ
պլարամենաի, պլուտարիատի իրան առջև յայտնելու,
որ ես ընդունում եմ օրինական, լեզար տրանսֆօրմա-
ցիայի, կանոնաւոր և խաղաղ էվոլյուցիայի հիպոտէզը,
ես նրա կողմանակից եմ: Որովհետեւ ես սաստիկ փափագում
եմ, որ այդ հիպոտէզը իրագործուի և ես կաշխատեմ
դրա համար, մենք բոլորս՝ իմ բարեկամները և ես կաշ-
խատենք... (Ծափահարութիւններ ծայրայեղ ձախակող-
մում):

διαγράψῃ δικιακοημο.—βιβλίου, επιέπει.

Ժօրէս... Մեր բոլոր ոյժերով կաշխատենք՝ միանալով գեմօկրատիկ և ըէֆօրմների քաղաքականութեան, որը զարկ կտայ, կաճեցնի բանւոր դասակարգի օրինական իշխանութիւնը և կանոնաւոր գործունէութեան միջոցներ:

Ահա այս մտքով, այս յոյսովն է, որ ես վկայութեան եմ բերում բոլոր մեծ սօցիալիստ թէօրէտիկների հեղինակութիւնը, որոնք զանազան ձևերի տակ խորհուրդ են տուել, նոյն իսկ սօցիալական յեղափո-



խութեան շահերի համար, էքսպրովինտայան սահմանը
մամբ իրագործել։ Մաքսն է եղեւ, ըստ վարչականի, որ
ասել է այս ուժեղ խօսքը. «Եթէ մենք գեռ կարողա-
նանք զրաւումը հատուցմամբ գլուխ ըերեւ, յեղափո-
խութիւնը կընստէ աւելի քիչ թանգ»։ Նա կամենում էր
ասել, թէ զրանով կարող են մէջ գալ գործառնութիւն-
ներ (transaction), որ թոյլ կտան ոչ մի վայրկեան չը-
դադարեցնել երկրի արդիւնաբերութեան գործունէու-
թիւնը,

Ինչ որ այդպէս ձևակերպում էր Մարքս, — Կառւցկին բացատրեց Էրֆուրտի սօցիալիստական ծրագրի այս մեկնութեան մէջ. «Էքսպրոալբիացիա չի նշանակում անհրաժեշտաբար յափշտակութիւն»: Նոյն միտքն է արտայատել և մեր բարեկամ՝ Վանդերվելդ, և ես պատգամաւորական ժողովից թոյլտութիւն եմ խնդրում առաջբերել այն գեղեցիկ և ուժեղ էջը, որ կտակել է Լիբերնեխտ միջազգային սօցիալիզմին.

«Սօցիալիստական ռամկավարութիւնը ժողովրդի ամբողջութեան կուսակցութիւնն է, ի բաց առնելով երկու հարիւր հազար մեծ կալուածատէրերի, զիւղացիական ազնուականների, բուրժուանների և քահանանների։ Հետեւաբար նա պիտի դառնայ գէպի ժողովրդի ամբողջութիւնը։ Եւ հէնց որ առիթը կը ներկայանայ, տալ նրան գործնական առաջարկութիւններով և ընդհանուր շահերի օրէնքի նախագծերով իրական ապացոյց այն իրադութեան, որ ժողովրդի շահն է ռամկավարութեան միակ նպատակը, ժողովրդի կամքը՝ իր միակ օրէնքը։ Առանց երբէք բռնանալու անհատի վրայ, բայց հաստատուն խօսքով և անփոփոխ նպատակով՝ նա պիտի անցնէ օրէսպրական շաւիդը։ Մինչև անգամ նա, որ վայելում

է այսօր արտօնութիւններ և մենաշնորհներ, նա պիտի խմանայ, որ մենք չենք խորհում ոչ մի բռնի, յանկարծակի միջոց՝ օրէնքով հաստատուած դրութեան դէմ և որ մենք վճռել ենք համզարտ և խաղաղ էվօլիցիայի շահերի համար օրինական անարդարութիւնից օրինական արդարութեան անցնելը իրագործել, որքան կարելիէ հարաւոր զգուշութեամբ՝ անհատների և արտօնեալների ու մօնօպօլիսաների դրութեան նկատմամբ։ Մենք ընդունում ենք, թէ անարդարութիւն կրինէր պատասխանատու համարել նրանց, որոնք վատ օրէնսդրութեան շնորհիւ կարողացել են իրանց համար արտօնեալ դիրք ստեղծել կամ այդ վատ օրէնսդրութեան համար անձնականապէս նրանց պատասխանատու համարել և նրանց պատժել։ Մենք յատկապէս յայտարարում ենք, որ մեր կարծիքով նըրանց, որոնց շահերը կարող են ֆլասուել ընդհանրութեան շահերին վասարող օրէնքների ոչնչացմամբ, պետութեան պարտքն է այդպիսիներին տալ մի որոշ հատուցում, որքան այդ հնարաւոր է և յարմար ընհանուրի շահերին,

«Մենք անհատների վերաբերմամբ պետութեան ունեցած պարտականութիւնների մասին աւելի բարձր կարծիքի ենք, քան մեր հակառակորդները և մենք այդ ձանսապարհից չենք շեղուի, եթէ մեր առջև կանգնածները նոյն իսկ մեր թշնամիները, մեր հակառակորդներն են»։

Պարոններ, ահա այս մտքով է, որ մենք մօտենում ենք խնդրին և այս մտքով ենք մենք մեզ հարց տալիս ձեր առջև, ի՞նչ կերպ պիտի ձեռնամուխ լինենք սօցիալական տրանսֆորմացիային;

Հնչպէս պիտի խլէր արդիւնաբերութեան միջոցները արտօնեալ դասակարգից, որը նրանց դրաւուած

պահում է և որը նրանց իշխելու, տիրելու և պրոլետարների ահազին բազմութեան կեղեքման գործիք է դարձրել:

Ինչպէս, պարոններ։ Դուք այդ կարող էք անել առանց խառնակութեան, առանց բռնութեան, առանց կողոպտման, առանց շփոթ-խոռվութեան։ Դուք այդ կարող էք դատարանական օրէնքների և սօցիալական միջոցներով, որ հենց այժմեանից ձեր տրամադրութեան տակ են գտնուում։ Հենց այժմեանից դուք կարող էք, եթէ դուք կամենաք, վերջ դնել դասակարգերի ըէժիմին, կապիտալը աշխատանքին կեղեքելուն, մարդը՝ մարդուն։ Հենց այժմեանից դուք կարող էք գործադրել կապիտալիստական ամեն մի սեպհականութեան էքսպրոպրիացիայի վեռաբերող ձեր դատաստանագրքերի օրէնքը՝ հասարակական օգտի համար արդար և նախօրօք հատուցմամբ կատարւող էքսպրոպրեացիայի օրէնքը։ (Ծափահարութիւններ ծայրայեղ ձախակողմում։ Զանագան շարժումներ կենտրոնում, աջակողմը և ձախակողմեան մի քանի նստարանների վրայ)։

Հասարակական օգուտն է, որ հանքերը, գործարանները, խոշոր կալուածները այլ ևս չը լինեն մի փոքրամասնութեան բացառիկ սեպհականութիւն։

Հասարակական օգուտն է, որ հասարակութիւնը բաժանուած չլինի երկու դասակարգի, —մէկը, որ տիրում է արդիւնաբերելու բոլոր միջոցներին, միւսը —իր ձեռքերի ոյժը կարող է շահեցնել միմիայն առաջնի պայմանները ընդունելով և նրան հարկ վճարելով։ Հասարակական օգուտն է, որ աշխատանքը այլ ևս անդադար տեղիք չտայ կապիտալիստների և վարձւողների ընդհարումներին։

Անցեալ օր պ. Միջլրան ասում էր, որ հարկաւոր է, որքան որ կարելի է, մի սահման դնել այս գործադունքին, որոնք, — աւելացնում էր նա, — քաղաքացիական տնտեսական կոփւ են, Սակայն քաղաքացիական տնտեսական կոփւը արտայայտում է հասարակական կեանքի մակերևոյթի վրայ գործադուլի ձևով. բայց այդ կոփւը գոյութիւն ունի ոչ միայն գործադուլի մէջ: Նա հասարակութեան իրան մէջն է զանւում: (Շատ լաւ, շատ լաւ, — ծայրայեղ ձախակողմում). Նա սեպհականութեան սիստեմի իրա մէջն է, սիստեմի, որ իշխանութիւն, ոյժ, զօրութիւն է տալիս մի քանիսներին, հնագանդութեան է հարկադրում միւսներին (Ծափահարութիւններ ծայրայեղ ձախակողմում):

Քաղաքացիական տնտեսական կոփւը, սոցիալական կոփւը կը շարունակի մերթ ակներե, մերթ գաղանի, երբեմն բուռն, երբեմն խուլ, սակայն միշտ, շարունակ միւսոյն տանջանքներով, միւսոյն զայրագնութեամբ, միւսոյն անարդարութեամբ, քանի որ արդիւնաբերութեան աշխարհը կուի, վէճի առարկայ կը լինի երկու հակառակորդ ոյժերի մէջ: Հնար, միջոց չկայ. գուք ինձ լսում էք, պարոններ, միջոց չկայ հաշտեցնելու վերջնականապէս այդ երկու ոյժը: Դուք կարող էք առժամանակ ամոքել պայքարները, դուք կարող էք մեղմացնել հարուածը, սակայն դուք չէք կարող արդելել մըշտական, հիմնական անտազօնիզմը, որ բղխում է սեպհականութեան արտօնութիւնից: Միայն մի միջոց կայ անտազօնիզմը վերացնելու, ջնջելու. դա՝ կապիտալը ներածել աշխատանքի մէջ, այնպէս անել, որ միայն մի ոյժ լինի՝ տիրող և կառավարող, աշխատանքի

ատեղծագործական ոյժը: (Ծափահարութիւններ ծայրայեղ ձախակողմում):

Եթէ երբ և է հասարակական օգտի առարկայ եղել է, դա այդ է միայն: Եթէ երբ և է եղել է մի բան, մի շահ, որ արդարացնի սեպհականութեան տրանսֆորմացիայի մէջ օրէնքի միջամտութիւնը, — դա է այն առարկան, այն շահը: Ահա թէ ինչու, գուք կարող էք ժըպտալ կամ ծաղղել, — մեր կողմն է ճշմարտութիւնը, երբ մենք ձեզ ասում ենք. հասարակական օգտի անունով էքսպուլիացիայի օրէնքը յօգուտ կապիտալի ծառայեցնելուց յետոյ, այդ օրէնքը գործադրեցիք, որ թոյլ տաք կապիտալին գիւղացիների դաշտերի վրայով երկաթուղիներ գցել, այդ օրէնքը գործ դրիք, որպէսզի թոյլ տաք կապիտալին ձեր մեծ քաղաքներում ընդարձակ շինութիւններ հիմնել: Այդ օրէնքը կապիտալիստական իշխանութեան շահերին ծառայեցնելուց յետոյ, ժամը եկել է, որ նրան գործադրէք յօգուտ աշխատանքի, որ իր իրաւունքն է պահանջում:

Պարոններ, երկու ալտերնատիվ կայ միայն՝ կամ գուք բոլորովին կոյր էք, կամ սեպհականութեան այդ տրանսֆորմացիան անխուսափելի է: Դուք հաստատ, անվթար չէք կարող պահել այսօրւայ հասարակութիւնը: Նա փտած է. նա դատապարտուած է. նա կարող է չքանալ միմիայն կոյր բանութեան բիրտ ոյժով կամ օրէնքի կարգաւորւած և հաշտեցուցիչ ոյժով: Եւ երբ ես ձեզ ասում եմ, որ հասարակական օգտի համար էքսպուլիացիայի այս կարգաւորւած իրաւունքը գործածելով՝ դուք կարող էք փոխակերպել հասարակութիւնը, իմ կողմից ես գրանով փորձում եմ հեռացնել յափշ-

տակութեան հնարաւորութիւնից ու գայթակղութիւնից և բռնի լուծումներից:

Յօգուտ ընդհանրութեան և աշխատաւորների գրաւուած կապիտալի տէրերին հատուցում կըտրուի: Այդ հատուցումը տրամաբանօրէն կորոշուի նոր հասարակութեան բնութեամբ (զանազան շարժումներ աջակողմը և կենտրոնում):

Ես ասում եմ, պարոններ, ըստ էքսպրոպրեացիայի ձեր օրէնքի՝ կապիտալի ներկայ տէրերին յատկացրւած հատուցման արժէքը պիտի որոշուի նոր հասարակութեան բնութեամբ, ուր այն արժէքը կունենայ իր գործածութիւնը:

Այսօր արժէքները թոյլ են տալիս իրանց տէրերին կամ զնել արդիւնաբերութեան և շահի միջոցներ, գործարաններ, վարձով անպու շինութիւններ, բենտայի թղթեր, կամ զնել արտադրութիւններ: Տրանսֆօրմացիայի ենթարկուած հասարակութեան մէջ, երբ արդիւնաբերական, շահագործական մասնաւոր կապիտալը համայնացրած կլինի, երբ սօցիալական համայնքը խմբած աշխատաւորների տրամադրութեան տակ կըդնէ արդիւնաբերութեան միջոցները, — հատուցման արժէքները, որ ստացած կըլինեն նախկին կապիտալիստները, այլ ևս սրանց թոյլ չեն տալ զնելու արդիւնաբերութեան, բենտայի և շահի միջոցներ: Նրանք նրանց թոյլ կըտան զնելու միմիայն սօցիալական փոխակերպւած գործունէութեան արտադրութիւնը (ծափահարութիւններ ծայրայեղ ձախակողմում):

Պարոններ, երբ օրէնքը վերացրեց ստրկութիւնը և վարձատրեց ստրուկների տէրերին, սրանք այլ ևս չէին

կարող հետեւեալ օրը ստացած վարձատրութիւնը ծառայացնել ստրուկներ գնելուն: Հապա ուրեմն, երբ կապիտալիստական սեպհականութիւնը համայնացրած կըլինի, վարձատրութեան տէրերը այլ ևս չեն կարող գնել ոչ արդիւնաբերութեան միջոցներ և ոչ արդիւնաբերողներին. Նրանք կարող են գնել միմիայն արտադրութիւններ: (Ծափահարութիւններ ծայրայեղ ձախակողմում: — Զանազան շարժումներ կենտրոնում և աջակողմում):

Դուք զարմանում էք, պարոններ:

Պ. Իյնար. — Բոլորովին ոչ:

Պ. Ժիլ Դանսետ. — Մենք չենք զարմանում: Մենք ձեզ ուշադրութեամբ լում ենք:

Ժորժէս. — Դուք զարմանում, դուք յուզւում էք՝ որպէս մի սկանդալից, որ մարդս այլ ևս անկարող կըլինի մարդ գնելու: (Ծափահար. ծայրայեղ ձախակ. — Ընդհատումներ կենտրոնում):

Այգալէս, պարոններ, ես պատասխանում եմ նրանց, որոնք մեզ առարկել են. «Եթէ դուք՝ էքսպրոպրեացիայի ենթարկելով ամբողջ կապիտալիզմը, փոխարէնը չեք հատուցանում, դա բիրտ յափշտակութիւն է: Եւ եթէ դուք հատուցանում էք, դա՝ կապիտալի վերահաստատումն է»: Ես նրանց պատասխանում եմ. սօցիալիստական հասարակութեան և կապիտալիստական հասարակութեան արժէքների մէջ, ինչպէս ես այդ ձեզ ցոյց տուի, այն հիմնական տարբերութիւնը կայ, որ վերջիններս տիրելու և կեղեքման արժէքներ են. Նրանք վերարտադրում են անվերջ ի վնաս մարդկային աշխատանքի՝ շահի և դիվեղենտի բօրսային խաղով և տոկու-

սիքով։ Իսկ սօցիալիստական հասարակութեան արժէքները միմիայն սպառման արժէքներ են, նրանք կը հատնեն սպառման հետ միասին և կազմակերպւած շուտով ազատագրւած և կազմակերպւած աշխատանքը բոլոր բեռներից։ (Ծափահարութիւններ ծայրայեղ ձախակողմում):

Դրանով, պարոններ, հասարակութիւնը կը փոխակերպուի. աշխատանքը կազմատագրուի՝ առանց արտօնեալների նոյն իսկ սովորութիւնների վրա բոնութիւն գործելու։ Եւ արտօնեալները իրենց առջև բաւական ժամանակ կունենան, ժամանակ, որ բուրժուազական յեղափոխական մեր աւագները միշտ չեն տալիս կղերին և ազնւականութեան, որպէս զի՞նրանք ընտելանային նոր բէժիմին։ (Ծափահարութիւններ ծայրայեղ ձախակողմ.): Ժամանակ կը տրուի նոյն իսկ խոշոր ունկորներին, նոյն իսկ արտօնեալներին, որ յարմարւեն նոր կարգերին, որ յարմարացնեն իրանց սերունդներին հաւասարական աշխատանքի վրայ հիմնւած նոր հասարակութեան։

Ոչնչացնելով այն ամենը, իչ որ է այժմս կապիտալի տոկոս, գիվիդենդ, վարձ, շահ, հասարակական այս բոլոր, տարեկան ՝—8 միլեարդից անց արժէքները դրւում են համայնքի անմիջական տրամադրութեան տակ։ Ի՞նչ պիտի անէ այս ամենը սօցիալական համայնքը։ Նա գրաւուած կապիտալից ստացւած միջոցների մի մասը նախ և առաջ կը յատկացնէ հասարակական և սօցիալական իսկական շահերին ծառայող խոշոր ձեռնարկութիւնների, առողջարար և ընդարձակ բնակարանների բազմացնելու՝ որպէս զի՞ գուրս կորզեն, ազատեն մարդկանց բազմութիւնը գարշահոտ և կեղտոտ բնակարաններից, ուր նրանց ալսօր ապրեցնում է կա-

պիտալը և տնակարձի բոնակալութիւնը։ (Ծափահարութիւններ ծայրայեղ ձախակողմում)։ Նա կը տայ ազատ կերպով միաւորւած գիւղացի փոքրիկ կալուածատէրերին միջոցներ՝ բարելաւել իրանց տնտեսութիւնը, ընդգարձակել, զարգացնել հողի պարարտութիւնը։

Երկրորդ, պարոններ, սօցիալական այս առաջ արամագրելի միջոցներով համայնականութիւնը լի ու լի կերպով կապահովի կեանքի բոլոր պատահարների, ծերութեան և ինվալիդութեան դէմ։ ոչ միայն նրանց, որոնք այսօր վարձով աշխատովներ են, այլ և նրանց, որոնք այժմ պատկանում են միջին դասակարգին, որ երբեմն քիչ բարեկեցութիւն է ձեռք բերում շնորհիւ միմիայն անվերջ անապահովութեան և մեծ ներդութեան։ (Ծատլաւ, շատ լաւ ծայրայեղ ձախակողմում)։

Վերջապէս, աշխատանքի բոլոր գնահատումները կարող են անմիջապէս աճել համաձայն նոյն այն կանոնի, որ իշխում է բանւորների կապիտալի դէմ զրածպահանջների մէջ։

Ի՞նչ են նրանք սովորաբար պահանջում։ Նրանք պահանջում են, որ հանքերի, ապակէգործարանների, հիւսուածագործարանների, ամբողջ ինդուստրեայի զանազան բանւոր կատեգորեաններին վճարող անհաւասար վարձը բարձրացնելի, սակայն բարձրացնելի համեմատական չափով աւելի փոքր և նւազագոյն համեստ վարձերը։

Այդպէս, պարոններ, սօցիալական համայնքը կապիտալիստական էքսպրոպրեացի հետեւալ օրը կը յարմարի աւելացնել բանւորների և գիւղացիների աշխատավարձերի լնդհանուրը ոչ թէ հարթելով, հաւասարեցնելով և նուազեցնելով հասցնել բոլորը մի միջին թւի։ Ո՞չ, հարկաւոր չէ, որ մի բանւոր անդամ կարողանայ կորցնել։

Մեծ տրանսֆորմացիայում, որը կազմատագրէ աշխատանքը, նոյն կանոնը կը լինի, ինչ կարգում, սահմանում են բանւորները, ինչ ներկայումս պահանջում են նրանք իրանց գործադուներով աւելացնել բոլոր աշխատավարձերը: Սակայն աւելացնել համեմատական չափով՝ առաւելագոյն ամենահամեստ վարձերը և շարունակել այդպէս՝ քանի կը մեծանայ սօցիալական արդիւնաբերութիւնը, մինչև որ աշխատանքի բոլոր գնահատութիւնները՝ գալով կը խառնուեն, կը հաւասարուեն, ոչ թէ հարթուելով դէպի ցած, այլ անվերջ պրօքրեսսայով դէպի բարձր: (Ծափահարութիւններ ծայրայեղ ձախակողմ.):

Պարոններ, ինչպէս պիտի գործէ, ինչպէս պիտի կառավարուի սօցիալական սեպհականութեան և սօցիալական արդիւնաբերութեան այս հսկայ գործիքը:

Եթէ մի այլ գործիք չըլինէր բացի ներկայ պետութիւնը, դուք կարող էք կարձել, որ սա կատանձնէ իր ոյժերին ոչ համապատասխան մի գործ:

Սակայն կապիտալի էքսպրոպրեացիայով կազմուած սօցիալական ընդարձակ ստացուածքի կառավարութիւնը կստանձնէ ոչ թէ ներկայ բիւրօկրատիկ պետութիւնը, այլ ուամկավարական պետութիւնը ամբողջ ժողովրդի անմիջական օդնութեամբ: Ժողովուրդը իր ձեռքը կառնէ գործի կառավարութիւնը: Նրան այդ մեծ և գժուարին գործում կօգնեն այն բոլոր պրօֆեսիօնալ խմբումները, որ կազմակերպում են այսօր մարդկային աշխատանքի բոլոր կատեգորիաներում: (Շատ լաւ, շատ լաւ—ծայրայեղ ձախակողմում):

Պարոններ, սա այն երկպատիկ բացայայտ օրէնքն է, սա ներկայ հասարակութեան երկպատիկ քաջ յայտնի ձգտումն է. մի կողմից ձգտում դէպի միութիւն, դէպի

կենտրոնականութիւն: Աշխատանքի բոլոր ձևերը ձըգտում են համակարգուել առևտուի և ինդիւստրեայի բարձրագոյն խորհուրդ, երկրագործութեան և առևտուի խորհրդատու զբասենեակներ: Դուք ինքներդ, պարոններ, ունիտարական պարլամենտով, հարկահանութեան մաքսային, մըցանակային և այլ օրէնքներով յափշտակւած, ամեն օր միջամտում էք անտեսական ամբողջ գործողութեան մէջ: Բայց երբ մեր ընկերութիւնների մէջ տիրում է միութեան այդ օրէնքը, այդ ձգտումը դէպի կենտրոնականութիւն, միաժամանակ մի արդար և երջանիկ հաւասարակշռութեամբ արտայտում է ձգտում ինքնավար խրմբումներ սահմանել՝ համայնքներ, որոնց անկախութիւնը դուք այս կամ այն ձեռք ուժեղացրել էք. պրօֆեսսիօնալ խմբումներ բանւորական կամ տէրերի (patronal), սինդիկատներ, որոնց իրաւունքները ընդարձակում են որոնց գործունէութիւնը զարգանում է:

Եւ այդպիսով, պարոններ, երբ հարկ լինի, որ վերջապէս աշխատանքը կառավարէ սեպհականութիւնը, նա կարիք կունենայ միսիայն յարմարեցնել, ներդաշնակել իր օգտին այն երկու ոյժը, երկու ձգտումները, որոնք մարդկային ընկերութիւնների մէջ աւելի և աւելի են շարախառնուում, զուգազբուում: Նա կատեղծէ վարչական նոր մարմիններ, որոնք կհամակարգեն պրօֆեսսիօնալ ջանքերը: Միաժամանակ նա աշխատանքի ամեն մի կատեգորիայի կօրպօրատիւ տեղական խմբերին, որպէս արդարութեան ընդհանուր կանոն, կը թողնէ լայն անկախութիւն, լայն ինքնավարութիւն, այնպէս որ իւրաքանչիւրի գործունէութիւնը և նախաձեռնութիւնը դրդուած լինի

գերագոյն աշխատանքի ընդհանուր կանոնով. (Ծափահարութիւններ ծայրայեղ ձախակողմում):

Ինչ էլ լինի, պարոններ, ձեր այսօրւայ կամ վաղւայ դատողութիւնը սօցիալիստական կարգերի նկատմամբ, կարգերի, որ ես փորձեցի այս ամբիոնից համառու կերպով որոշել, — դուք չեք կարող հերքել, որ դուք դանւում եք մի այնպիսի վարդապետութեան առջև, որը կարող էք համարել խիզախ, ուսուպիկ, ունայն...

Յօդրի զԱսսօն Օ՛հ այս...

Ժօրէու. — Ա՛հ, այս, հասկանալի է: Դուք կարող էք նրան դատել ունայն, կարող էք նրան հաշել նոյն իսկ ուտոպիկ: Եատ այլ վարդապետութիւններ են դատել ունայն, և արտօնեալների կողմից յայտարարւել են ուտոպիկ նոյն իսկ հենց այն օրւայ նախընթացին, երբ նրանք երևան պիտի գային պատմութեան մէջ: (Ծափահարութիւններ ծայրայեղ ձախակողմում):

Սակայն, յամենայն դէպս, մենք ձեզ զրել ենք մի ճշգրիտ և վիճելի լուծման հանդէպ, մի հաստատման, որ դուք կարող էք հասկանալ, որ դուք կարող էք հրատարակել: Եւ այն ժամանակ ինչ կարծիքի էլ լինէք մեր վարդապետութեան նկատմամբ, ինչ էլ մտածէք այն սխառեմի մասին, որ հաստատում է, թէ վարձով աշխատողների և մարդկանց ազատութիւնը մասնաւոր կապիտալի հասարակական սեպհականացման մէջ է միմիայն գտնւում: Ես կը կնում եմ՝ մի ճշգրիտ վարդապետութիւն է ձեր առջև: Եւ երբ մենք դիմում ենք պրօլետարներին, երբ մենք դիմում ենք բանտորներին, երբ մենք նրանց ուշադրութիւնն ենք հրաւիրում, երբ մենք նրանց յիշեցնում ենք այն ցաւերը, որոնցով նըրանք տանջւում են, — մենք չենք սահմանափակւում,

պարոններ, ցոյց տալով այն տանջանքները և վէրքերը: Մենք՝ չը խուսափելով արտօնեալների այն հսկայ ոյժի ոխը մեզ դէմ հանելու վտանգից, արտօնեալներ, որ իրանց ձեռքի ազգեցութեան տակ են պահում պրօլետարների մի մասի միտքը (Նոր ծափահարութիւններ ծայրայեղ ձախակողմում)... Մենք պրօլետարներին սակայն ասում ենք՝ ահա ձեր տանջանքների սկզբունքը, ահա ձեր ցաւերի արմատը: Եւ ձեզ ապացուցանելու համար, պարոններ, որ մենք չենք աշխատում գըրգըռել այս թշւառութիւնները, այլ նրանց բժշկել, ես՝ չնայած ձեր հեգնութեան և թշնամանքի, արեցի այստեղ այս փորձը. և մենք նոյնը ասում ենք տարիներից ի վեր, ինչ գոյութիւն ունի սօցիալիստական կուսակցութիւնը. անում հենք դուքսը, ինչպէս և այստեղ: Բայց քանի որ մենք այդ անում ենք, քանի որ մենք յանձն ենք առնում այդ պատասխանատութիւնը. — մենք իրաւունք ունենք, մի ժամ ծազր կրելուց յետոյ, դառնալ ոչ թէ դէպի պահպանողական և յետագիմական կուսակցութիւնները, այլ այն կուսակցութիւնները, որ իրանց անւանում են ռամկավարական և յառաջադէմ: Մենք իրաւունք ունենք նրանց հարցնելու. իսկ դժւք, ո՞րն է ձեր վարդապետութիւնը և ինչ էք կամենում դուք անել: (Ցուռն ծափահարութիւններ ծալրայեղ ձախակողմում): Այս. ինչ կարող էք դուք անել՝ աշխատանքն ազատագրելու և կազմակերպելու համար: Պարոններ, դուք, որ լսում էք ինձ պատգամաւորների ժողովի այս ձախ կողմում, դուք՝ բոլոր արմատականներդ և հանրապետականներդ, ես ձեզ աղերսում եմ հաւատալ՝ ես ձեզ պրօվկացիայի կամ կուի հրաւէր չեմ ուղղում: Այլ դիմում եմ ձեզ, որպէս հանրապետականների:

ՄԵՆՔ միասին մեծ բաներ ենք կատարել, երբ մենք փրկեցինք հանրապետութիւնը ցեղարական վը-տանգից, երբ մենք ազատազրեցինք աշխարհիկ հասա-րակութիւնը թէոկրատիայի բեկորներից... (Ժափահա-րութիւններ ծայրայեղ ձախակողմում:—Ընդհատումներ կենդրոնում և աջակողմում):

Սակայն այժմ այդ մեծ գործը աւարտած, այժմ, երբ ժամը եկել է մեղ բոլորիս համար տալ կամ մեր ամբողջ ջանքը, կամ մեր գլխաւոր ջանքը սօցիալական բարեփոխութեան գործին, հարկաւոր է, քանի որ սօ-ցիալիստները յայտարարել են իրանց վարդապետութիւ-նը և իրանց մեթոդը, — հարկաւոր է, որ գուք էլ մեղ ասէք՝ ինչպէս էք գուք ըմբռնում սօցիալական էվոլյու-ցիան:

Հա, գուք արդէն այդ յայտնել էք, սակայն այնպի-սի բառերով, որ կարօտ են մի քանի անհրաժեշտ ճշշ-գրտութիւնների: Ես արդէն մի այլ տեղ էլ առաջ եմ բերել, ես կամենում եմ նորից յիշել այն կոչը, որ բո-լոր արմատական և սօցիալիստ-արմատական թէրթերը՝ Radical, Justice, Rappel... (Բացականչութիւններ զա-նազան նստարանների վրա):

Պարոններ, գուք շիտում էք տարիները: Ես խօ-սում եմ 1885 թւականի մասին: (Ժափահարութիւններ և ծիծաղ):

1885 թւին մինչդեռ սօցիալիստական կուսակցու-թիւնը բաղկացած հազիւ մի բուռն պրօպագանդիստնե-րից և աքսորից վերադարձ մի քանի պայքարողներից, նոյն իսկ մեծ քաղաքների ընդհանուր ընտրութիւնների վրա շատ չնշին ազդեցութիւն ուներ, — այդ ժամանակ արմատական կուսակցութիւնը՝ կամենալով օպօրտիւնի-

ստներից խլել կառավարութեան ղեկը, դէպի իրան էր կոչում բանւոր գառակարգը՝ արմատականների բոլոր խոշոր թէրթերը՝ Rappel, Radical, Justice, որի խմբա-գիրը, ինչպէս գիտէք, պ. Կեմանսոնէր:

Եյնար.—Ուր էիք գուք այդ ժամանակ, պարոն ժօրէս:

Ժիւլ Դանսետ.—Դուք այն ժամանակ կենտրոնում էիք, պարօն ժօրէս:

Ժօրէս.—Ուր գուք էք, պարօն էյնար, և դուք դեռ բաւական երիտասարդ էք՝ անցնելու այն միևնոյն ճա-նապարհը, որով ես անցայ...

...Բոլոր թէրթերը ուղղում էին Պարիզի քաղաքացի-ներին մի մանիֆեստ, որից ես բառացի առաջ եմ բե-րում այս երկու ֆրազը.

«Մեր գաղափարը յեղափոխութեան գաղափարն է: Երկրի ներսում միայն մի նպատակ կայ՝ սօցիալական լիակատար արդարութիւն»:

«Ով որ այսօր սօցիալիստ չէ, նա հանրապետական չէ: Հարկաւոր է, որ զրամավարկը՝ դիւրամատչելի գառ-նալով բոլոր աշխատաւորների համար, թոյլ տայ նրանց բոլորին էլ վերջապէս ազատուել աշխատավարձի սիս-տեմից (salariat)».

Եւ այդ օրւանից, պարօններ, արմատականները և սօցիալիստ-արմատականները նորից և նորից կրկնել են աշխատավարձի սիստեմի բէժիմի դէմ միևնոյն դատա-վճիռը, նրանք բոլորն էլ ասել են, որ հակասութիւն կայ տնտեսական և հանրապետական բէժիմների մէջ. առա-ջինը վարձով աշխատողին ստրուկ է դարձնում, միւսը՝ քաղաքացուց՝ ազատ մարդ, գերազոյն իշխանութեան մի մասը: Նրանք բոլորն էլ ասել են արդիւնաբերողներին

բանւորներին, ինդիւստրիայի պլոլետարներին կամ դիւ-
դացիներին. «Աշխատավարձի սիստեմը միայն մի կայսն
է. աշխատավարձի սիստեմը միմիայն մի անցողակի ըէ-
ժիմ է»:

Հապա, պարոններ, դուք հանրապետութեանը պարտ
էք մի պարզ բացարութիւն: Եթէ դուք չգիտէք՝ թէ
բանւոր դասակարգը ինչպէս պիտի ազատուի աշխա-
տավարձի սիստեմից. Եթէ դուք վստահ չէք այն միջոց-
ների նկատմամբ, որոնցով նա կազատագրուի. Եթէ դուք
ձեզ մտքի մէջ չունիք մի գաղափար, նոր հասարակու-
թեան մի տիպ, — դա մի մեծ անխոհեմութիւն, մի մեծ
սիստեմ է, որ դուք կատարում էք՝ բանւոր դասակարգի
դիմաց գարկաբեկ անելով մի բէժիմ, որը դուք վստահ
չէք՝ թէ կարող էք ոչնչացնել: (Ծափահարութիւններ
ծայրայեղ ձախակողմում):

Գրանով դուք կարող էք միմիայն զրգուել թշուա-
ռութիւնը՝ գրգռելով իւլիւզիայով յոգնած բանւոր դա-
սակարգերի յոյսը: (Շատ լաւ, շատ լաւ, ծայրայեղ ձա-
խակողմում):

Հապա մենք իրաւունք ունենք ձեզ ասելու: Ինչ-
պէս էք դուք հասկանում աշխատավարձի սիստեմից
փրկւելը: Ի՞նչ նոր հասարակութիւն էք դուք կամենում
հիմնել: Ի՞նչպէս էք կամենում դուք նրան պատրաստել: Այն ընդհանուր վարկը, որով, 1885 թւից սկսած, բո-
լոր պլոլետարները կապիտալից պիտի ազատագրուէին,
— ի՞նչպէս էք դուք նրան ըմբռնում: Ի՞նչպէս էք կամե-
նում նրան կազմակերպել, պատրաստել:

Ահ 1885 թւին, հոկտեմբերեան ընտրութիւնների
հետևեալ օրը, դուք իրաւունք ունէիք այլիս չյիշել այդ
խօսքը: Արմատական կուսակցութիւնը ունէր միմիայն

150—160 ներկայացուցիչ: Այն ժամանակ կային 200 օպօր-
տիւնիստներից և չափաւորներից բաղկացած մի բլոկ, որը
ձեզ պատերազմ էր հրատարակում, ձեզ խոչնոտ էր հան-
դիսանում: Յար և միապետական մի ուժեղ օպազօգիցիա,
որը շահագործելով հանրապետականների պառակտումնե-
րը, օրէնքը էր թելագրում հանրապետական կուսակցու-
թեանը: Այժմ այս ամենը վերջացել, գնացել է: Միա-
պետական և կղերական օպազօգիցիան երկրի կորովի կամ-
քով չքացել, մի անգամ չնչին բանակութեան է հասց-
րած: (Ծափահարութիւններ ծայրայեղ ձախակողմում և
ձախակողմում):

Ես, պարոններ, ասում եմ, որ արմատական և սո-
ցիալիստ-արմատական կուսակցութիւնները՝ 1885 թւին
պարլամենտում մի փոքրամասնութիւն միայն կազմելով,
հարուած կրելով աջակողմեանների ուժեղ օպազօգիցեայի,
օպօրտիւնիստների և չափաւորների մեծ կուսակցութեան
կողմից, — պատասխանատու չէին կարող լինել սօցիալա-
կան իրանց տուած խոստումների ամբողջութեան նկատ-
մամբ: Սակայն այժմ հանրապետականների ընդհանուր
ջանքերով միապետական, կաս նացիօնալիստ, կղերական
աջակողմեանները՝ փշրւած, ջարդուած, հասցրւած են
զրեթէ մի աննշան քանակութեան: Չափ կողմը՝ ընդ-
հակառակը, եթէ դուք հաշուէք արմատականներին և
և սօցիալիստ-արմատականներին, արմատականութեան
սօցիալական գաղափարը իրադորձման համար մի մե-
ծամասնութիւն կայ: Եւ դուք, ներքին գործոց պարոն
մինիստր, դուք՝ որ 1885 թւին ստորագրել էք աշխա-
տավարձի սիստեմից պլոլետարներին ազատագրութեան
մեծ սօցիալական խոստումը, դուք, որի բարեկամները,
աշակերտները, զինակից ընկերները, — որոնցից շատերը,

ինչպէս ձեզ յայտնի է, իմ անձնական բարեկամներս են, և ես դրանով հպարտանում եմ, — բոլորն էլ նորից տուել են այն խօսքը և այն խռատումը: Դուք այժմ ունիք ոչ միայն իշխանութեան մի մասը, այլ որպէս արմատական կուսակցութեան պարագլուխ, որը երեսուն տարիներից ի վեր նրան դէպի կոփւ, դէպի պատերազմ՝ էք առաջնորդել, դուք ունէք մի մեծամասնութիւն, որը երկրի առջև նոյնպէս ստորագրել է սօցիալական այն մեծ բեփօրմների խոստումը: Դուք; ուրեմն կառավարութեան մէջ էք, դուք էք, ուրեմն, իշխանութիւնը, այլևս ոչ միայն արտաքուստ, այլ ևս ոչ միայն իշխանութեան մի մասը կազմելով, ոչ այլ ևս թոյլ, անզօր մասնակցութեամբ, այլ երեան գալով որպէս մի ամբողջ կառավարութիւն, որի անդամները՝ արմատականներ և արմատական-սօցիալիստ մեծամասնութիւնից: Դուք կտուավարութիւն էք՝ իր կատարելութեամբ, հետեաբար և իր պատասխանաւութեամբ: (Ծափահարութիւններ ծայրայեղ ձախակողմում):

Հապա այժմ ես ձեզ հարցնում եմ՝ ի՞նչ պիտի անէք դուք, որպէս զի դուրս հանէք պրօլետարներին աշխատավարձի սիստեմից, վայր գցէք նրանց շղթաները. քաղաքացիներին ազատազրելուց յետոյ ազատազրէք և արդիւնաբերողներին. որպէս զի պատրաստէք, իրագործէք անտեսական և սօցիալական հանրապետութիւնը, ինչպէս մենք իրագործել ենք քաղաքական հանրապետութիւնը, դուք ինձանից շատ առաջ, — ի՞նչ պիտի դուք անէք:

Ինձ միք ասի՞՝ թէ մարդու միաքը երկբայ, վարանոտ՝ ենթակայ է գժուարութիւնների և խարխափման; Դուք կրոն մի հրաշալի ճառի մէջ ասել էք. «Ես՝ ինչ-

պէս և դուք, մի սխալական մարդ եմ, որ հետազոտում, խարխափում է միութեան մէջ»: Այն, սենք բոլորս էլ սխալական մարդիկ ենք: Սակայն պատմութեան մէջ ժամեր, մօմենտներ կան, երբ մարդիկ ստիպուած են մի որոշ գիրք, որոշ գրօշակ ընդունել: Հարիւր տասն և հինգ տարի է, երբ բռնկեց այն Մեծ Յեղափոխութիւնը, որի զաւակն էք դուք մաքով և մարմնով: Ճիշտ է, բոլոր այն մարդիկ՝ և Միքարօ, և Վերնիօ, և Թօբեսպիիր, և Յոնդորսէ. սրանք նոյնպէս ենթակայ են եղել վարանման և սխալմունքների: Նրանք երեան էին հանում սիստեմ սիստեմի դէմ, մտքի յղացումներ մտքի յղացումների դէմ: Բայց իրար հետ ընդհարւելու վտանգի հետ միասին՝ նրանք վճիռ, որոշում էին կայացնում, նրանք համարձակում, յանդինում էին: Նրանք գիտէին, որ էին աշխարհը վերջացել, վակուել, լուծուել է. որ հարկաւոր է վերցնել նրա բեկորները և հիմնել մի նոր հասարակութիւն: Եւ իրար հետ վիճելով, իրար հետ ընդհատւելու վտանգի հետ միասին՝ նրանք թէ մէկը և թէ միւսները բերում էին նախագծեր, մտքեր, սիստեմներ: Եւ գոռող համեստութեան խարխափումներով չէր, այլ մտածուած հաստատութիւնների վեհանձնութեամբ և խիզախութեամբն էր, որ նրանք քանդեցին էին աշխարհը և ստեղծեցին նոր աշխարհ:

Մեզ համար նոյնպէս, հարիւր քսան տարուայ կուից, հարիւր քսան տարուայ սօցիալիստական մտքի և բանուոր գեմօկրատիայի ջանքերից յետոյ, մեզ՝ ներկայ հաստարակութեան համար նոյնպէս ժամը եկել է՝ բանալ իր զաղանիքը՝ իրագործել արդարութեան երազը, որով նա տոգորուած է. ժամը եկել է՝ կարծիք յայտնելու, արտայայտւելու: Ամեն մի հետեանք և պատասխանաւու-

թիւն մեզ վրա վերցնելով՝ մենք յայտնում ենք մեր միտքը, մեր կարծիքը։ Դուք էլ՝ ամեն մի հետևանք և պատասխանատութիւն ձեզ վրա առնելով՝ դուք էլ ձեր կարծիքը յայտնեցէք, դուք որ իշխանութիւն էք կազմում։ (Բուռն ծափահարութիւններ ծայրայեղ ծախակողմում):



Վ Բ Ի Պ Ա Կ

Ախալ
Երես տող
15 6 անկարող

ԱՆԴՐՈՅ

«Ազգային գրադարան»



NL0217153

32. 411

Ե Ն Յ Ա Լ Ի Ս Ե Ա Ե Լ

1.	Բաիկը.—Հարուստներ և աղքատներ (սպառ.)	20	կոպ.
2.	Պիշչենումիլ.—Հաց, լոյս և ազատութիւն	12	"
3.	Փէղօրօլիչը.—Ինչպէս հն ժողովում և ծախու- տում ժողովրդական փողերը	5	"
4.	Կարմելիլիկ.—Նոր լեռան բարովը	2	"
5.	[REDACTED]	15	"
6.	Գերեներստորֆեր.—Ազգային հարցը և սօցիալ- գեմոլրատիան	5	"
7.	Պրամպոլինիի.—Գիւղացիներին	5	"
8.	Եր. Թուֆչեան.—Արհաստակց. միութիւններ	15	"
9.	Դովուրդմիլի.—Ի՞նչ է իրաւական սկառութ.	15	"
10.	Ե. Կարանով.—Հողային հարցը նոր Զե- լանդիայում	2	"
11.	Ժան Ժօրէս.—Բուրգ. սեփականութիւնը և նրա ազագայ գրաւումը	5	"

Տպագրուած են եւ շուտով լրի կտեսնեն

1. [REDACTED]
2. [REDACTED]
3. Բաիկը.—Հարուստներ և Աղքատներ II տպագ.:
4. Ալֆոնս Դիմիան.—Ժողովրդական օրէնսդրու-
թիւնը Զելցերիայում:
5. Կարլ Կառուսիի.—Ազգութիւնների հարցը
Ռուսաստանում:

Պատրաստուած են ապագրութեան համար մի շարք ու-
րիշ գրքեր:

Ցանկացողները դիմեն «Յառաջա-ի խմբագրատուն»
Ֆրէյլինսկայա № 6.